Ուսուցանել & սովորել - թարմացումներ
Հունվարի 2018

Լավ պահեք իրար...

1. **Նախամանկապարտեզի/մանկապարտեզի տեղեկատվության երեկո –** WPS-ը հիւրընկալում է մեր տարեկան նախամանկապարտեզի/մանկապարտեզի տեղեկատվության երեկոն, այսօր՝ **չորեքշաբթի, 10 հունվարի, 2018 թ., երեկոյան ժամը 6:30-7:30-ին** մեր երեք տարրական դպրոցներում: 2018 թ. աշնան նախամանկապարտեզ եւ կամ մանկապարտեզ մտնող երեխաների ծնողները կամ խնամակալները հրավիրված են մասնակցել այս տեղեկատվական ժողովին: Այնուհետեւ, **նախամանկապարտեզի գրանցումը** կսկսի *Early Steps Preschool*-ում՝ երկուշաբթի, 22 հունվարի, 2018 թ., եւ **մանկապարտեզի գրանցումը** տեղի կունենա **գրանցող գրասենյակում՝ Phillips Building, սենյակ 205, 30 Common Street**, *ոչ* թե տարրական դպրոցներում, հետեւյալ ժամանակացույցով.
   a. Չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, 17, 18, 19 հունվարի՝ Cunniff դպրոցի աշակերտների համար
   b. Չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, 24, 25, 26 հունվարի՝ Hosmer դպրոցի աշակերտների համար
   c. Չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, 31 հունվարի, 1, 2 փետրվարի՝ Lowell դպրոցի աշակերտների համար
   d. Ի լրումն՝ նախատեսված է երեկոյան գրանցում 30 Common St.-ում չորեքշաբթի, 31 հունվարի, երեկոյան ժամը 5-7ին՝ երեք տարրական դպրոցների համար:

   Գրանցման պատրաստության համար, հորդորում ենք ծնողներին ու խնամակալներին, որ լրացնեն գրանցման փաթեթները (տեղեկություններն ու փաթեթները կարող եք վերցնել ձեր երեխայի դպրոցից կամ ներբեռնել Վաթերթաունի հանրային դպրոցների կայքէջից (http://www.watertown.k12.ma.us):

2. **WHS-ի Ղեկավարության գիշեր. Աշակերտների եւ ընտանիքների աշխատանոցների երեկո –** Չորեքշաբթի, 17 հունվարի, երեկոյան ժամը 6-8-ին, Ղեկավարության բաժանմունքը կհյուրընկալի *Ղեկավարության գիշեր. Աշակերտների եւ ընտանիքների աշխատանոների երեկո*: Այս երեկոյան ընթացքում, աշակերտներն ու ընտանիքները կկարողանան շրջել երեք տարբեր աշխատանոցներում, որոնք կենտրոնացած կլինեն զանազան թեմաների վրա (ստրեսի կառավարում, ուսումնառության հմտություններ, քոլեջի դիմելու գործընթաց): Եթե դուք ցանկանում եք ներկա լինել, խնդրում ենք լրացնել այս կարճ հարցումը՝ երեկոյան աշխատանոցների ժամանակացույցի կազմության համար: (Խնդրում ենք նշել – դուք կարող եք ներկա լինել, նույնիսկ եթե չեք լրացնում այս հարցումը. միայն աշխատում ենք աշխատանոցների առաջարկների թիվը եւ ժամանակը վերջնական տեսքի բերել): Եթե հարցեր ունեք, խնդրում ենք կապվել մեր WHS-ի գլխավոր առաջնորդության խորհրդատուի՝ Էտրիեն Իթոնի հետ՝ adrienne.eaton@watertown.k12.ma.us հասցեին:

3. **Նախագծի վրայ հիմնված ուսում (PBL)** – PBL-ը ուսուցման մեթոդ է, որն աշակերտներին տալիս է գիտություն եւ հմտություններ՝ աշխատելով երկար ժամանակով հետազոտելու եւ պատասխանելու իսկական, գրավիչ ու բարդ հարցի, խնդրի կամ մարտահրավերի: WPS-ում, շուրջ 30 միջնակարգի եւ ավագ դպրոցի ուսուցիչներ մասնակցեցին երեք օրվա ամառնային դասընթացքի՝ նախագծի վրա հիմնված ուսման մասին (PBL), որը մատուցվել է Buck Institute for Education-ի (BIE) անձերի կողմից: Այցելեք այս բլոգը մի քիչ ավելի սովորելու PBL-ի մասին BIE-ում՝ սեղմելով այս լինքը. Project-Based Learning Blog

4. **Սովորելու եւ ղեկավարության դասընթացքների առաջարկներ** - Առաջիկա հինգշաբթի, հունվարի 16ին, մեր ամբողջ շրջանը կմասնակցի պրոֆեսիոնալ զարգացման (PD)։ Ուրեմն՝ աշակերտները դպրոց չեն ունենալու։ Այս հարուստ PD-ի օրը ներառում է հետեւյալը.

    a. **Նախամանկապարտեզը եւ նախադպրոցը** կմասնակցի սրտաթոքային վերակենդանացման (CPR) ամբողջ օրվա վերապատրաստման
    b. **Մանկապարտեզ-5-րդ դասարանի ուսուցիչները** կշարունակեն կենտրոնանալ գրագիտության վրա՝ մասնակցելով գրագիտության PD-ի ամբողջ օրվա հանդիպման մեր Ուսուցման դաշինքի խորհրդատուների հետ
    c. **Մեր 6րդ-12րդ դասարանների աշխատակազմը եւ մանկապարտեզ-12րդ դասարանի դաստիարակչական օգնականները** պիտի մասնակցեն երկու, 1.5 ժամվա PD նիստերի՝ այստեղ ցուցակագրված առաջարկներից, իսկ օրվա երկրորդ կեսին կլինի դպրոցական հիմքով գործակցություն (օրինակ՝ դասարանների մակարդակ, բաժանմունքի մակարդակ, համատեղ դասաւանդում, տվյալների վերլուծում, ուսումնական ծրագրի քարտեսի վերանայում, PLT-ներ)։

5. **Մանկապարտեզից մինչեւ 5րդ դասարան չափորոշիչների վրա հիմնված վիճակացույցների (SBRC) պլանավորման նիստեր** – Վերջերս հանդիպեցին տարրական դասարանների ուսուցիչների ներկայացուցչական մի խումբ, մաթեմատիկայի մարզիչը (Էլեֆթերիա Բուրձինակու), տարրական դասարանների ուսումնական ծրագրի համակարգողները (Էլիզաբեթ Քափլան, Ալիսոն Դոնովան) եւ ուսուցման, սովորելու եւ գնահատման վերահսկիչի օգնականը (Թերեզա ՄաքԳինես)՝ շարունակելու չափորոշիչների վրա հիմնված վիճակացույցի ստեղծումը, սկսելով մանկապարտեզից եւ առաջին դասարանից։ *Լրացուցիչ տեղեկություններ կլինեն ուշ գարնան։*

6. **«Ուսուցման քայլարշավ» Lowell դպրոցում** - Շրջանի Ղեկավարության թիմը, որը բաղկացած է դպրոցական եւ շրջանային կառավարիչներից ու համակարգողներից, սկսեց «Ուսուցման քայլարշավ» ծրագիրը այս շաբաթ՝ Lowell դպրոցի այցելությամբ։ Այս «Ուսուցման քայլարշավ»ների նպատակն է Ղեկավարության թիմին առիթը տալ, որ զարգացնի հավաքական ըմբռնում, թե ինչպես է երեւում արդյունավետ դասավանդումը եւ ուսուցումը Վաթերթաունի բոլոր դպրոցներում։ Մենք գիտենք, որ ունենք գերազանց դաստիարակչական պրակտիկաներ յուրաքանչյուր դպրոցում, բայց քիչ առիթներ՝ դրանք կիսելու տարբեր շենքերի միջեւ։ «Ուսուցման քայլարշավ»ը տալիս է եզակի առիթը՝ մի շենքում կենտրոնացած կառավարիչներին, սովորելու այլ դպրոցներում հաջող պրակտիկաների մասին։

7. **Սոցիալական էմոցիոնալ ուսուցման (SEL) ծրագիր կներկայացվի տարբրական դպրոցներում 2018-2019 ուսումնական տարում:** Այսօրվա հարափոփոխ համաշխարհային տնտեսությունում, աշակերտներին պատրաստելը՝ դպրոցն ավարտելուց հետո, պետք է ընդգրկի կյանքն ուսումնական առարկաներից այն կողմ: Այս 2015 Rennie կենտրոնի տեղեկագիրը քննում է այն ձեւերը, որոնցմով Մասաչուսեթսի դպրոցական շրջանները կարող են օգնել աշակերտներին սոցիալական եւ էմոցիոնալ կարողություններ մշակել, ինչպիսիք են արություն, հարատեւություն, զգացմունք եւ լաւ որոշումների կայացում: Այս նպատակով, սկսել ենք հավաքել կարծիքներ WPS-ի համայնքի բոլոր մարդկանցից (աշակերտներ, աշխատակազմ, ընտանիքներ): Սոցիալական էմոցիոնալ ուսուցման եւ դպրոցական կլիմայի մասին մտածումների, փորձառությունների եւ զգացումների վերաբերյալ հիմնական տվյալներ հավաքելու համար, SEL-ի թիմը (8 ուսուցիչներ եւ 7 կառավարիչներ) ստեղծեց մի հարցախույզ Panorama Education-ի միջոցով (Հարվարդում հիմնավորված ծրագիր) Վաթերթաունի հանրային դպրոցների համար: Աշխատակազմի անդամները՝ նախամանկապարտեզից մինչեւ 12րդ դասարան, հարցուփորձի ենթարկվեցին դեկտեմբերին, աշակերտների հարցախույզները (3րդ-5րդ եւ 6րդ-12րդ դասարաններ) տեղի կունենան այս ամիս, եւ **ընտանեկան/ծնողական հարցախույզը էլ-փոստով կուղարկվի այս ամսվա վերջում:** Երբ դուք ստանաք այդ էլ-փոստը, խնդրում ենք 10 րոպէ տրամադրել ձեր մտածումներ կիսելու մեզ հետ: *Շնորհակալություն:*

WPS-ի գործընկերություն - Մենք հրավիրվեցինք Հարվարդի շրջանավարտների կրթության դպրոցում (HGSE) ռազմավարական գործընկերությամբ աշխատելու Հարվարդի «Ինտեգրացիայի վերապատկերում. Այլազան եւ հավասար դպրոցների նախագծում» (RIDES կայքէջ)՝ WPS-ի նվիրված հավասարության պատում զարգացնելու համար: Ինչպես վերակացուն ասել է նրա մուտքի ծրագրում երկուշաբթի օրվա դպրոցական կոմիտեի ժողովին, անցյալ գարնան, Լի Թեյտելը, ով պրոֆեսոր է HGSE-ում, կապվեց Վաթերթաունի հանրային դպրոցների հետ՝ դպրոցներում հավասարության խնդիրների շուրջ ռազմավարական գործընկերություն կազմելու մասին: Այս գործընկերությունը տալիս է աջակցություն WPS-ին՝ մեր դպրոցներում համակարգային ու կենտրոնացած ձեւով հավասարությունը խթանելու շրջանակը ուսումնասիրելու համար: Երբ մտածում ենք հավասարության մասին, խոսում ենք այն մասին, որ բոլոր աշակերտները ստանան ինչ որ պետք ունեն մեր դպրոցներում հաջող լինելու համար՝ անկախաբար նրանց ցեղային, էթնիկական, մշակութային, սոցիալ-տնտեսական ծագումից կամ նրանց հաշմանդամության կարգավիճակից: Այս աշխատանքը կենտրոնացած է բացահայտելու ներկա պրակտիկաներ որ խթանում են հավասարությունը, քննելու անհամեմատության տվյալները եւ ներմուծելու հաւասարության պրակտիկաներ ռազմավարության զարգացման գործընթացում: Երբ քննարկեցինք այն տվյալները, որոնք հավաքվել էին վերակացուի ավելի քան 75 անհատական եւ խմբական հարցազրույցներում՝ Վաթերթաունի հանրային դպրոցների համայնքի բանալի կազմերի հետ, բացահայտ դարձավ, որ թե՛ ակնկալությունների բաց եւ թե՛ իրագործումների բաց կա մեր ենթախմբերում, հատկապես ավելի մեծ՝ բարձր կարիքների ենթախմբում, որն ընդգրկում է հատուկ կրթության ծառայություններ ստացող աշակերտներ, անգլերեն լեզու սովորողներ եւ տնտեսապես անբարենաստ պայմաններում գտնվող աշակերտներ:

Ստորեւ մի քանի նկարներ մեր 7 նոյեմբերի, 2017 թ. պրոֆեսիոնալ զարգացման օրից, երբ առավոտյան ընթացքում գործակցեցինք աշխատակազմի հետ՝ Վաթերթաունի երկրորդական վարժարաններում հավասարության մասին:

Աշխատակազմի կարծիքներից դուրս եկան հետեւյալ թեմաները.
- Դասարաններում/շրջանում հավասարություն ու արդարություն խթանելու անկեղծ շահագրգռություն
- Համակարգային խնդիրների (հավասարություն եւ անհավասարություն) մասին գործընկերների հետ բաց խոսակցություններ ունենալու հաճույքը
- Ուսուցչական կազմում նոր ու տարբեր մարդիկ ճանչնալու շահագրգռություն
- Այլազանություն ընդդեմ հավասարության մասին լրացուցիչ կրթության անհրաժեշտություն
- Տվյալների վրա հիմնված հետազոտության մասին ուժեղ շահագրգռություն
- Ցեղապաշտութեան մասին (*երբեմն տհաճ*) քննարկումը շարունակելու շահագրգռություն
- Ուժեղ ցանկություն, որ սա լինի շարունակվող գործակցության գործընթաց
- Բազմաթիվ գնահատական նկատողություններ, որ մեր ընթացակարգերը/կառույցը առավոտյան նիստերի ընթացքում տարբեր հեռանկարներով մարդիկ կողք-կողքի բերեց, որոնք հաճախ առիթ չունեն երկխոսություն հաստատելու՝ սովորական առօրյա գործերում:

Դոկտ. Լի Թեյտել, HGSE

WMS եւ Primary Source վերջերս կազմակերպել էին **Our Mockingbird** վավերագրական ֆիլմի ցուցադրությունն ու քննարկումը: Այս ֆիլմը խոսում է երկու ժողովրդագրական տարբեր կազմությամբ ավագ դպրոցների մասին՝ Ալաբամայի Բիրմինգամ քաղաքում, որոնք գործակցել են *To Kill a Mockingbird*-ի նշանակալից մեկ արտադրությունում: Ֆիլմը ներկայացրեց ուժեղ հարցեր ցեղի, դասակարգի, խտրականության եւ արդարության մասին՝ անցյալին եւ հիմա: Երեկոն ուներ բեմադրիչի հետ հարցուպատասխանի բաժին, հավաքական քննարկում եւ ուսումնական ծրագրի դասարանային աշխատանքների առաջին հայացք: *To Kill a Mockingbird* մաս է կազմում մեր 9-րդ դասարանի անգլերենի ուսումնական ծրագրի:Ֆիլմի մասին լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք www.ourmockingbird.com



Տարրական մաթեմատիկա ծնողական համալսարանում
Էլիզաբեթ Քափլան, STEM համակարգող մանկապարտեզից մինչեւ 5րդ դասարաններում

WPS *Նոր* տարրական դպրոցների տեսիլքի նիստ – *դեկտմբերի 2018*

Շնորհակալ ենք, որ միանում ենք աշակերտների, դաստիարակների, ընտանիքների եւ Վաթերթաունի համայնքի անդամների հետ՝ սկսել տեսնելու, թե ուսուցումը եւ սովորումը ինչպես կարող են երեւալ *նոր* տարրական դպրոցներում, որտեղ ամեն աշակերտ ամեն դասարանում (կամ ճկուն տարածքում) ծաղկում է ուսումնական եւ սոցիալ-էմոցիոնալ իմաստներով՝ ամեն օր: Ինչպէս դոկտ. Գալդստոնը ասել է վերջին դպրոցական կոմիտեի ժողովին, դեկտեմբերի տարրական դպրոցի շենքի նախագծի տեսիլքի նիստերում, աւելի քան 50 շահագրգռված անձանց մի խմբից խնդրվել է լրացնել «Ուժեղ կողմեր, մարտահրավերներ, առիթներ եւ նպատակներ» վարժութիւն՝ նոր դպրոցական շենքերի ակնոցով: Երբ քննարկվում էին առիթներն ու նպատակները, վարժությունում աշխատող բոլոր խմբերից դուրս եկան մի քանի առաջնահերթություններ: Սրանք ներառում էին՝ տարածքներ, որոնք թույլատրում են թե՛ մեծ եւ թե՛ փոքր խմբերի դասավանդումը. գործնական ու իրական ուսուցման փորձառությունների առիթներ. տարածքներ, որոնք թույլատրում են բոլոր աշակերտների հեշտ ինտեգրացիան. տարածքներ, որոնք խթանում են գործակցությունը, եւ կանաչ տարածք, որը կարող է օգտագործվել իբրեւ բացօթյա դասարան, մի քանիսը հիշելու համար: Խմբերի մեկ ուրիշ առաջնահերթություն էր կարիքը՝ մեր շենքերն ավելի կենտրոնացնելու համայնքի շուրջ, խթանելով միջսերնդային կրթական փորձառությունները մեր տարրական դպրոցներում եւ տալով լայն առիթներ՝ համայնքի հետ կապված ձեռնարկների տեղ տալու: Ուշադրությամբ հետեւեք պլանավորման եւ թիմային աշխատանքի բազում առիթների՝ WPS-ի համար այս նշանակալից պատեհության շուրջ:



Ձեր պլանավորման համար...

1. **Դպրոց չկա** – Երկուշաբթի, 15 հունվարի, Մարթին Լուտեր Կինգի օրվա նշում
2. **Դպրոց չկա** – Երեքշաբթի, 16 հունվարի, ամբողջ օրվա պրոֆեսիոնալ զարգացում աշխատակազմի համար
3. **WHS-ի միջկիսամյակի քննություններ** – 23-26 հունվարի (կես օր աշակերտների համար)

Առայժմ՝ այսքան, բարեկամներ

Լաւագույն մաղթանքներով՝
Թերեզա

Թերեզա Մաքգինես, Ed.D.
Վերահսկիչի օգնական

Ամեն երեխա... Ամեն դասարան... Ամեն օր